Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՆԳԻՍՏ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Խոր վշտով հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Վեհարանում հունիսի 29-ին, երեքշաբթի, ժամը 17.50-ին, անժամանակ, կյանքի 67-րդ տարում ի Տեր հանգչավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատև և ծանր հիվանդությունից հետո:

Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետը Լուսավորչի Աթոռին բազմեց 1995 թ. ապրիլի 4-ի ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի ընտրությամբ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության 18-ամյա գահակալի հարուստ փորձառությամբ: Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառամյա հովվապետության տարիներին իմաստությամբ ու անսակարկ նվիրումով հովվեց Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցին: Նորին Սրբությունը Մայր Հայրենիքի, Արցախի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգևոր վերազարթոնքի, հզորության ու միասնության սրբազան առաքելությանը ծառայեցրեց իր եռանդն ու անխոնջ ջանքերը, խոսքն ու գործը:

«Հարկ ի վերայ մեր կայ» պարտքի զգացումով իր հայացքը հառած քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյա դարակազմիկ հոբելյանին, Հայոց Հայրապետն արդյունավորեց հովվապետության կարճատև իր շրջանի յուրաքանչյուր օրն ու ժամը: Վերակազմվեցին Հայ Եկեղեցու թեմերը Հայաստանում և ԱՊՀ երկրներում: Ընդարձակվեց եկեղեցաշինությունը՝ վերանորոգվեցին և բարեզարդվեցին խոնարհված եկեղեցիներ ու վանքեր, կառուցվեցին նորերը: Գևորգյան Ճեմարանի նորոգյալ հարկից ներս հասունացավ հոգևոր սպասավորների նոր սերունդ: Աշխուժացավ և ընդարձակվեց Քրիստոնեական Դաստիարակության ու Քարոզչության Կենտրոնի գործունեությունը: Գործել սկսեց Օշականի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» նորաբաց դպրատունը: Արգասաբեր եղավ Մայր Աթոռի հրատարակ-

չական գործունեությունը՝ հրատարակությամբ աստվածաբանական և հայագիտական աշխատությունների, որոնց շարքում՝ Վեհափառ Հայրապետի մեծաթիվ գրքեր ու գրվածքներ:

1700-ամյակի շրջագծում Մոսկվայի Կրեմլում, Վատիկանում և աշխարհի այլ քաղաքներում բացվեցին եկեղեցական արվեստի ցուցահանդեսներ, կազմակերպվեցին գիտաժողովներ և ուխտագնացություններ դեպի հայրենի սրբավայրեր: Կյանքի կոչվեցին սոցիալական զարգացման ծրագրեր՝ ուղղված տնտեսական դժվարությունների հաղթահարմանը Հայաստանում և Արցախում: Իր բարձր հեղինակությամբ Վեհափառ Հայրապետն առավել ամրապնդեց էկումենիկ կապերը քույր եկեղեցիների հետ, հովվապետական հաճախակի այցելություններով մխիթարեց և օրհնություն բաշխեց հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս և Ափյուռս: Նորին Սրբությունը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպես խոշոր մտավորական, արժանացել է աշխարհի մի շարք ակադեմիաների և համալսարանների պատվավոր դոկտորի կոչմանը:

Մայր Աթոռի սգավոր միաբանությունը՝ խորազգաց հավատավոր մեր ժողովրդի և Հայրենի պետության՝ առ Վեհափառ Հայրապետը ցուցաբերած որդիական սիրո և սրտակցության դրսևորումից, Սուրբ Հոգու մխիթարությունն է հայցում համայն հայությանը: Մայր Աթոռի միաբանությունը և Գերագույն Հոգևոր խորհուրդը հայտարարում են քառասնօրյա սուգ:

Աղոթք, խունկ և բյուր օրհնություն Վեհափառ Հայրապետի անմեռ հիշատակին: Թող Բարին Աստված Իր Փառաց Պսակին արժանացնի և երկնային երանավետ խաղաղության մեջ ընդունի սիրեցյալ Հայրապետի լույս հոգին՝ ընդ դասս աստվածազգաց Հայոց երանյալ Հայրապետաց:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ